

յա մասին այնպէս զգուանքով և սոսկումով  
են խօսում:

«Եթէ ոք ի մծդնէութեան գտցի (ասումէ  
Շահապիլանի 19րդ կանոնը) կամ երեց սար-  
կաւադ կամ ի հարեղայից՝ քահանայութիւնն  
լու ծցի, ալուեսազրոշմ ի ճակատն դիցէ, և ի  
տեղի մի ճգնաւորաց յապաշխարութեան տա-  
ցեն: Ապաթէ դարձեալի նոյն գտցի, զջիղսն կըտ-  
րեսցն զերկոսեան և ի դրովնոցն աացեն: Նոյն-  
պիսի խիստ պատիմներ որոշումէ յաջորդ կա-  
նոնը նաև աշխարհականների համար. «Կամ  
իշխան ոք կամ ընտանիք նորին գտցին ի մծդղ-  
նէութեան, նոյնպէս նզովեալ եղիցին և ի հրա-  
պարակ մի իշխանոցն գալ»....\* Անչքան մեծ էր  
խստութիւնը մծդնէութեան դէմ, այնքան էլ  
մեծ պէտք է եղած լինի սորա հրապոյըը ժո-  
ղովրդի համար, որ այսպէս քահանայ ու իշ-  
խան, ամենքին իւր կողմն էր զրաւում: Կրօ-  
նաւութեան պահանջած ճգնական կեանքը  
այս հրապոյըը չունէր, մինչդեռ զաղանի անբա-  
րոյականութեան, օրինազանցութեան, միւս-  
տիքական սովորութիւնների ու նախապաշա-  
րումների՝ տգէտ և մեղկ ամրոխի վերայ ազ-  
գեցութիւն անելը դիւրաւ հասկանալի է: Զը-  
զերը կտրելու պատիմը հաւանականաբար նո-  
րա համար էր, որ աղանդաւորներին արգել-  
ուի իրենց խորհրդաւոր պարը շարունակելու:

Եթէ ինկատի ունենանք, որ Շահապի-  
լանի ժողովը գումարովները Ա. Սահակի և  
Պեսրոպի աշակերտներն էին և որ նոցանից  
առաջ եկեղեցին օտարի ձեռքով էր կառավար-  
ուում: Որոշ ազգային կերպարանք դեռ չէր  
ստացել հասկանալի կլինի, թէ ինչու այս  
աղանդի վերայ ևս նորա առաջին անդամ  
ուշագրութիւն գարձրին: Մինչև Ե. գար  
մեր ժողովուրդը ինքնուրդյն կրթութիւն չու-  
նենալով՝ չէր կարող գեռ որոշել, թէ որն է  
հրապարար, որը խորթ, որը ծմարիտ քրիս-  
տոնէականը և որը քրիստոնէութեան անուան

տակ ծածկուած մոլորութիւն. և ասորի քա-  
րողիները, որ հաւանականաբար մեծ մասամբ  
տգէտ էին և անոսայ վարքի տէր՝ գուցէ ի-  
րենք նոյն իսկ արծարծել և քաջալերել էին  
այսպիսի աղանդներ: ինչպէս էր Մծդնէութիւ-  
նը, ինչպէս վերև յիշուած հեթանոսական  
մնացորդները: Սահակ և Պեսրոպ և նոցա  
աշակերտները որոշ կարգեր ու կանոններ սահ-  
մանելով կախ սկսեցին բոլոր այն տարրերի  
դէմ որ խորթ էին և օտարամուտ: և այդ  
կոխւը նոցա մահով չկերծացաւ: Կրօնական  
պատերազմները առ ժամանակ զբաղեցնում էին  
ամենքի ուշագրութիւնը այնպիսի մեծ և կա-  
րեւոր ինդիլներով: որ աղանդների հետ զբաղ-  
ուելու միջոց չկար, իսկ երբ պատերազմը վեր-  
ջացաւ, այդ աղանդները, ինչպէս Փարապեցու  
զրութիւնից տեսնում ենք, կրկին զլուխ բարձ-  
րացրին և, հաւանականօրէն իրար խառնուե-  
լով մծդնէութեան թևի տակ՝ դեռ դարեր շա-  
րունակ գոյութիւն ունեցան և պատմութեան  
մէջ մի քանի անդամէիլ երեան եկան նորա-  
նոր անուններով:

Կ. Ա.



## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՒՆ\*

ԿԱԹՈԼԻԿԻ ԵԿԵՂԵՑԻ.

1. ՄԻ ՆՈՐ ՀՕԳԵՆՈՐ ԳՐՈՑ Կ. ՊՈԼՍՈՒՄ.

Անցած տարուան վերջին օրերում լրագիրները  
հաղորդեցին Հռոմից: որ պապը վճռել է մի նոր  
հոգեութ գորոց բան ալ Կ. Պոլսում արև-  
ելեան քրիստոնեաների համար:

Եյս վճռոն համարուում է հետեանք վատի-  
կանի վերջին անյաջող միութեան ժողովի: Անչպէս  
երեւումէ, պապական գահի նեցուկ յիսուսեանները:  
որոնց գործն էր և վերջին ժողովը վճռել են ի-  
րենց ըոլոր ցժը գործ դնել արևելքում պապի իշ-  
խանութիւնը ընդարձակելու: Անհայրինիք յիսուս-  
եանները, որոնց առաջև փակուած են բոլոր եւրո-  
պական երկիրները, վերջին ժամանակներս իրենց  
գործունեութեան ասպարեզ են ընտրել Տաճկաս-  
տանը, մանաւանդ Փաքը Ասիան և Հայաստանը:

\* Այս կամաները մէջ են թերուած մասամբ Զամենամի  
չափ պատմութեան մէջ եւ աւելի ընդարձակ, բայց նոյն-  
պէս թերի կերպով Աթէլ Աքբեկիսկովոսի Պատմութիւն ժո-  
ղովոց Հայաստանեաց և կեղծեցոյ, զրում:

Գրանսիայից պատրուած պատերներն արդէն իսկ հաստատուել են տաճկական Հայաստանում: այժմ ըստ երկութիւն նրանք մի կեդրոն են կամենում սաեղծել իրենց համար Կ. Պոլսում՝ ուր թէպէտ շատ տեսակ գպրոցների կարիք կայ, բայց ոչ պապական գպրոցի, որովհետև Միթմարեան հայրերը մի երկու հատ այդպիսի գպրոցներ են պահում միայն հայերի համար:

### ՕՐԹՈԴՈԽԾԱ ԵԿԵՂԵՑԻ

1. Կ. ՊՈԼՍԻ ԿԱՄ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱԲՔՈՒԹԻՒՆ.

Նէոփիտոս Բ. պատրիարքի Հրաժարականից յետոյ Կ. Պոլսի պատրիարքական տեղապահ ընտրուեցաւ Քրուսայի մետրապոլիտ Նաթանայելը, Հոկտեմբերի 26 ից սկսած յունական պատրիարքարանը զբաղուած էր նախ՝ առ կաֆ մնացած խնդիր ների լուծմամբ և երկրորդ՝ պատրիարքի ընտրութեան պատրաստութեամբ:

Առ կախ մնացած խնդիրներից նշանաւոր էր տաճկական լեզուի պարտաւորութեամբ և ցուցիչ է լինելու հրամանը յոյժն դպրոցների մէջ: Հենց այս խնդիրն էր, որ պատճառ եղաւ Նեոփիտ Բ.-ի անկման: Հրաժարած պատրիարքը համաձայնութիւն էր տուել՝ որ տաճկական լեզուն պարտաւորութեամբ էրպագիւ աւանդուի բոլոր յոյն եկեղեցական ժողովրդական ու բարձր գպրոցներում: այժմ՝ պատրիարքական տեղապահը մի յատուկ շրջարերականով յայտարարում է բոլոր թեմակալ առաջնորդներին: «որ նրանք հոգան ըստ չափու կարեաց տաճկերէն լեզուի աւանդման մասին բարձր (այսինքն՝ միջին և բարձրագոյն) դըպ բոցներում և ոչ թէ ծխական ժողովրդական գպրոցներում: ինչպէս այդ պատուիրած էր նախակին պատրիարքի օրօք»: Այս շրջարերականը հիմնուած է տաճկական նախարարի թէ սքի ի լէ ի՝ Հրամանագրի վերայ: Այս մի մեծ յաղթանակ է պատրիարքական տեղապահի կողմից: որի համար Կ. Պոլսի այլ պատրիարքութիւնները կարող են նախանձել յոյն եկեղեցուն:

Յունաց պատրիարքի ընտրութեան մասնակցում են 85 ի շահ պատճամաւորներ, որոնցից 12 հոգի Սինօդի անդամներն են և մի քանի թեմակալ եպիսկոպոսներ, որնք պատահար Կ. Պոլսումն են գտնուում: 8 հոգի աշխարհական խառն ժողովի անդամներ, մեծ լոգոթէտը ու 2 այլ պաշտօնեայք պատրիարքարանի, 3 քաղաքացիական մեծ պաշտօնեաների ներկոյացուցիչներ, 2 զինուորական պաշտօնեաների ներկայացուցիչներ, 3 քաղաքացիա-

կան ներկայացուցիչներ Սամսոնի իշխանի, 4 հոգի յայտնի գիտնականներից: 5 հոգի վաճառականների ներկայացուցիչներ, 1 սեղանաւոր, 2 ներկայացուցիչ Կ. Պոլսի քաղաքի, 28 ներկայացուցիչներ զանազան թեմերից ելն:

Մինչև ընտրական ժողովի բացումն բոլոր մեռուպղիմները պարտական են իրենց ընտրելիների անունները ու զարկել ժողովին: որից յետոյ վերաստութիւն է լինում պատճամաւորների վաւերաթղթերի և ապա ընտրութիւն թեկնածուների, որոնք առաջարկուումեն Բ. դրան ի հաստատութիւն:

Կ. Պոլսի պատրիարքական իշխանութիւնը ոչ միայն յոյների վերայ է տարածուում՝ ոյլ նաև բոլոր ազգութիւններին պատկանող օրինոգործների վերայ, սակայն տիեզերական պատրիարքները միայն յոյների մասին են հոգում ուստի և հետզհետէ կորցնում են այլացեղ հաւատացեալներին: Յոյն թեմակալներն իրենց հաւատակից բոլղարների և սերբների լեզուն ու եկեղեցական հիմնուուրյունութիւնը հալածելով այն տեղին հասցըրին: որ 30 տարի առաջ բոլղարացիք բաժանուեցան և առանձին էկզարքութիւն ունենացըրին, այժմ էլ գէգոհութիւն են յայտնում սերբ օրինոգործներն և երեխնրանք էլ բոլղարների օրինակին կը հետևեն:

### 2. ԱԵԼԵՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ.

Տաճկաստանի սահմաններում դոյութիւն ունեցող յոյն եկեղեցուց զանազանուելու համար յունական թագաւորութեան եկեղեցին սովորութիւն է գարձել հ ել են ական կոչել այդ սովորութեան պիտի հետևենք և մենք, որպէս զի ընթերցողը ըլշիոթէ մեր լեզուի մէջ սովորական յոյն եկեղեցի անունը: որ յատուկ է առ հասարակ բոլոր օրինոգութիւնը եկեղեցուն:

Վաղուց է արդէն դոյութիւն ունի Յունաստանում «վերածնութիւն» անունով մի ընկերութիւն, որի նպատակն է օգնել յոյն ազգի վերածնութեան: մասնաւորապէս քրիստոնէական վերածնութեան: Ընկերութիւնը նպատակ ունի ժողովրդի աչքում բարձրացնել եկեղեցու նշանակութիւնը, հոգալ եկեղեցականների կրթութեան համար, քարոզչութիւնն ընդարձակել քրիստոնէական ոգին վառ պահիլ ընտանիքներում: գպրոցներում և զանազան դասակարգերում:

Այս ընկերութիւնն յատուկ քարոզիչներ է պահում: լոյս է ընծայում երկու պարիհարական հըրատարակութիւններ — «Աերածնութիւն» և «Աբառաջինը նշանակուած է կը ըթուած գասակարգերում:

համար, իսկ վերջինս ժողովրդի, Ընկերութեանս նախագահին է նըմէնքի Գերմանոս մետրոպոլիտն, իսկ փոխ նախագահին է Ռանդաբէն, որ այժմ՝ առաջին շոյն գրագէտն է համարուած։

Գերմանոս եպիսկոպոսի ջանքերի շնորհիւ 1890 թուին կազմուեցաւ մի նոր քահանայական ընկերութիւն, որի նպատակն է նպաստել յոյն հոգևորականների զարգացման և նախապատրաստութեան։

Եյս ընկերութիւնը հսկումէ քահանայութեան թեկնածուների վերայ, հոգում է եկեղեցական երգեցողութեան, եկեղեցական պատկերագրութեան և առհասարակ եկեղեցու բարեզարդութեան մասին։

Եյս երկու ընկերութիւնների համերաշխ գործունեւութեան շնորհիւ հելլենական եկեղեցին նըկատելի կերպիւ յառաջադիմում է։

Աչա մի գեղեցիկ օրինակ եկեղեցու վերածութեան համար աշխատել ցանկացողներին, Մեր մէջ ևս ցանկութիւն կայ բարձրացնելու եկեղեցականների կրթութեան առտիճանն ու եկեղեցու արտաքին բարեզարդութիւնը, աշխարհական և հոգևորական հրապարակագիրները առիթ չեն փափցնում։ Բարձրագոյն աղաղակներով բողոքելու տգէտ քահանայութեան և եկեղեցական անբարեզարդութեան գէմ թող օրինակ առնեն արգ և տեսնեն՝ թէ ուրիշ եկեղեցիք ի՞նչ ձանապարհներով են հասնում նոյնանման նպատակների։ Սակայն մենք գեն խծրըծելու և միմեանց մեղադեմու շրջանումն ենք, տայ Աստուած որ շուտով հասնեինք գործելու շըբջանին։

### ՅՈՒՍՈՒ ԵԿԵԼԵՑԻ.

Նորագարձ օրթոդոքսներին առանձին հրձուանք է պատճառում իրենց մայրենի լեզուով կատարած ժամերգութիւնը, այդ մասին հաղորդում է ուսւաց «Եկեղեցական համբաւարերը»։ Եյսպէս Լատի շների լեզուով պատարագ է մատուցուել Վիտերսկի եկեղեցում։ ուր բազմութիւնն այնքան է եղել, որ շատերն եկեղեցում չեն կարողացել տեղ գըտ նել։ Նոյնպիսի արգիւնք է ունեցել և Կազանի թեմում։ Բայզըչին գիւղում չուաշերէն արած պատարագը։

Ուսւաց եկեղեցու թեմերում հետզետէ հաստատուում են այսպէս կոչուած «գործակալների կամ բարեկարգիչների խորհուրդներ»։ որոնց պարտականութիւններն են։

ա. Քննել եկեղեցու միաբանների մէջ ծագած դժուութիւններն և ծխականների բողոքները իրենց քահանաների գէմ։

բ. Ակայութիւններ տալ եկեղեցու պաշտօնէից մասին։

դ. Խշանութեան առաջարկել քահանաներին և պաշտօնեաներին պարգևատրել։

ե. Քննել քահանայական որբոց և այրեաց գործերը և սինօդին առաջարկել միանուակ նպաստ ներ նշանակելու։

ֆ. Քննել եկեղեցիների և եկեղեցական վերանորդութեան համար տուած խնդրագիրը։

ի. Դրենց շրջանում ընկերութիւններ հիմնել հընական գրադարաններ բանալու և լ. առհասարակ եկեղեցու բարեզարդութեան մասին հոգալ։

Քաղաքային նոր օրինագործ իրաւունք է արբուած քաղաքային վարչութիւններին հոգալու եկեղեցիների բարեզարդութեան մասին։ Օգեսսա քաղաքը, որի բնակիչների մեծ մասն օտարազգի և օտարագաւառն են, մեծամեծ գումարներ է յատկացրել ուսւահեցու բարեզարդութեան համար։ Խարկով Կիև, Կազան և այլ քաղաքների խորհուրդները դրամական նպաստներ են տալիս մայր եկեղեցիներում երգեցիկ խմբեր պահելու համար։

Պետերբուրգից հեռագիրն հաղորդումէ, որ բարձրագոյն հրաման է արձակուած արբունի գանձարանից 700,000 ռուբլի յատկացնել ի նպաստ ուսւաց սինօդի իրաւասութեան տակ գտնուող բոլոր դպրոցների։

### ՄԱՏԵՆԵԽՈՒՅԵԿԻՆ

Անցեալ տարուայ վերջին լոյս է տեսնել յայտնի հայագէտ Պրօֆ. Ֆ. Առնիբերի մի նոր գրուածքը՝ The Apology and Acts of Apollonius and other Monuments of Early Christianity. London, 1894. (Յառագովութիւն և վկայաբանութիւն Ապոլոնիսի), Եյս գեղեցիկ գործը պարունակումէ 12 հին յիշատակարանների թարգմանութիւն հայերէնից և նուիրուած է Մայր Աթոռիս միաբան գպիր Գալուստ Տէր Մկրտչեանցին։ Կաշխատենք յաջորդ համարում զըրքի բովանդակութեան հետ ծանօթացնել մեր ընթերցողներին։

ն. Ք.

